

Katia Peltekian, *The Times of the Armenian Genocide. Reports in the British Press Vols. 1 & 2, 1914-1923, Beirut, 2013, 976 pages:*

Քաթիա Փելթեքեանի խմբագրած այս գոյգ հատորներով լաւագոյն ծառայութիւնը կը մատուցուի Հայկական Յեղասպանութեամբ հետաքրքրուած իւրաքանչիւր ուսանողի, պատմաբանի ու դիւանագետի: Ահաւասիկ եւս երկու հատոր, ուր ամփոփուած են անգլիական պատկանելի թերթերու մէջ ատենին - օրը օրին - լոյս տեսած այն հարիւրաւոր հաղորդագրութիւններն ու տեղեկատուութիւնները, որոնք անհերքելի ապացոյցները կը հանդիսանան մարդկութեան դէմ գործադրուած աննախընթաց ճշիւներէն ամենէն ահաւորին Հայկական Յեղասպանութեան, որուն ենթարկուեցաւ իր բնօրրանին մէջ ապրող ու ստեղծագործող հայ ժողովուրդը:

Հեղինակը տակաւին 2000 թուականին ուսումնասիրողներու տրամադրութեան տակ դրած էր *Heralding of the Armenian Genocide: Reports in The Halifax Herald, 1894-1922* ժողովածուն, ուր վերոյիշեալ թերթին աշխատակիցները իրենց հասած սարսափելի դէպքերու ծաւալումներուն մասին դրկուած հարիւրաւոր լուրերով ու թղթակցութիւններով կ'արձագանգէին Օսմանեան Թուրքիոյ տարածքին ընթացք առած այն ահաւոր խժոժութիւններուն, որոնք յետագային կոչուեցան «դարուս առաջին ցեղասպանութիւնը»:

Տքնանքով, յամառ ու հետեւողական աշխատանքով մէջտեղ եկած գոյգ հատորներ, ուր 976 մեծադիր էջերու մէջ ներկայացուած են 1038 թղթակցութիւն եւ հաղորդագրութիւն, բոլորը պատճենահանուած: Ասոնք կու գան վկայելու հայուն գողգոթային մասին՝ 1914էն 1923. եւ ասոնք տակաւին միայն *The Times, The Sunday Times* եւ *The Manchester Guardian* թերթերու մէջ լոյս տեսածներն են:

Հեղինակին առաջնային նպատակը եղած է ընթերցող եւ ուսումնասէր լայն շրջանակի մը սեղանին դնել Ա. Համաշխարհային Պատերազմին նախորդող ամիսներէն սկսեալ մինչեւ 1923ի Լոզանի Պայմանագիրը երկարող տարիներու ժամանակագրութիւնը, ուր ներառուած են ոչ միայն ջարդերու, տեղահանութիւններու, կողոպուտներու, առեւանգումներու սահմոկեցուցիչ նկարագրութիւններ, այլեւ Բրիտանական Կայսրութեան խորհրդարանին մէջ եղած աշխուժ քննարկումները, սրտցաւ կոչերը՝ օգնութեան փութալու պատերազմի ու ցեղասպանութեան արեւալիքներուն ենթարկուող հայութեան եւ, ինչու չէ նաեւ, ապահով օրրան մը ապահովելու հայ ժողովուրդին համար:

Այսպես օրինակ, *The Manchester Guardian*-ի 1915 Ապրիլ 28-ի թիւին մէջ «Հայաստանի Ապագան» վերնագրով *Նամակ Խմբագրին* բաժնին մէջ A. S. S. անունով սրտցաւ ընթերցող մը կը գովէ Սըր Ուիլիամ Ռամսէյի (Sir William Ramsay)¹ տեսակէտը, որ կ'առնչուի Թուրքիոյ ապագային: Սըր Ռամսէյ կարելոք կը նկատէր նախաձեռնող եւ գործարար ոգի ունեցող հայ ազգին համար բնօրրան մը ստեղծելը: Նամակին հեղինակը կը պնդէ որ Անտանտի Երկիրներու հսկողութեան տակ դրուելիք վեց վիլայէթներու (90.000 քառ. քլմ.) տարածութեան վրայ պէտք է աւելցնել նաեւ Կիլիկիան (էջ 45):

Հետաքրքրական փաստ է այն, որ շատ յաճախ Հայաստանի եւ հայ ժողովուրդին առնչուող լուրերը տպուած են զոյգ թերթերու առաջին էջերուն վրայ, ինչ որ ցոյց կու տայ հայոց կացութեան հրատապութիւնը՝ Անգլիոյ համար: Յիշեցնենք թէ *The Times*-ը դեռեւս ԺԸ դարու վերջերէն արժանահաւատ ու վստահելի թերթի համբաւ ունէր, եւ տասնեակներով թղթակիցներ ունէր Օսմանեան Կայսրութեան ամբողջ տարածքին:

Անգլիական մամուլին մէջ յաճախ կը յիշուին նաեւ հայերէն վրէժխնդիր ըլլալու դէպքեր, թէեւ կայսրութեան գլուխը անցած իթթիհատականները ջանք չեն խնայեր թուրքերուն եւ աշխարհին համոզելու թէ հայեր եւ Օսմանեան բանակին մէջ ծառայող (հաւատարիմ) հայ քաղաքացիներ իբր կը գործակցէին կամ միտք ունէին գործակցիլ թշնամիին հետ: Այսպէս, 11 Ապրիլ 1917-ի թիւին մէջ թղթակիցը կը գրէ թէ Օսմանեան բանակը մինչ անկազմակերպ կը նահանջէր դէպի Անկարա (Անգարա) եւ ռուսական զօրքերուն ձեռքը կ'անցնէր Երզնկան, իսկ քայլերական բանակները գրեթէ ոչինչ կ'ընէին դրութիւնը փրկելու համար, թուրք հրամանատարութեան կարգադրութեամբ կ'ոչնչացուին 1700 հայ զինուորներ եւ վարպետ արհեստաւորներ, որոնք կ'աշխատէին արհեստանոցներու եւ ճամփաներու վրայ (էջ 222):

Անգլիա լուրջ արշաւ կազմակերպած է հայ գաղթականներուն օգնութեան հասնելու ուղղութեամբ: Այս մասին կան առատ տեղեկութիւններ, որոնք լոյսին կը հանեն ազնուասիրտ անգլուհիներու անսակարկ նուիրումին փաստերը: Փայլուն օրինակ է Օրդ. Էմիլի Ճ. Ռոպինսընի պարագան: Ան Լոնտոնի մէջ պատուակալ քարտուղարուհին էր Հայկական Կարմիր Խաչի եւ Գաղթականներու Հիմնադրամին: Ռոպինսըն, *The Manchester Guardian*-ի 25 Ապրիլ 1917-ի թիւին մէջ սրտառույ կոչ կ'ընէ որ չէքերն ու այլ օգնութիւնները դրկուին նշուած հասցէին (էջ 223):

Ա. եւ Բ. Հատորները կը սկսին Քաթիա Փելթէքեանի նախաբանով, որուն կը յաջորդէ հայ ժողովուրդի երեքհազարամեայ պատմութեան ժամանակագրութիւնը՝ 883 Ք.ա. մինչեւ 29 Հոկտ. 1923, երբ Մուսթաֆա Քեմալ հայերէն եւ այլ փոքրամասնութիւններէն զաւթուած

տարածքներու վրայ յայտարարեց Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադրութիւնը: Հատորները օժտուած են նաեւ մատենագիտական ցանկով:

Տարիներու քրտնաջան արդիւնքի մը առջեւ կը գտնուինք ըսելը՝ ամբողջական պատկերը չի տար ներկայացուող երկու հատորներուն, որոնց լոյս ընծայման մէջ ոչ միայն իր ժամանակը, այլեւ՝ նիւթական աղբիւրները չէ զլացած ուսումնասէրը, որուն լոկ փափաքը եղած է թուրքին հետ խօսիլ փաստերու լեզուով:

Յիրաւի՝ լուրջ անձնական ներդրում մը հայկական ցեղասպանագիտութեան բնագաւառէն ներս՝ 100 ամեակի սեմին:

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ
mkojayan@sbcglobal.net

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Մըր Ուիլիլմ Ռամզեյ (1852-1916)՝ քիմիագէտ, 1904ի Նոպելեան մրցանակակիր: